

ինչ գովեստներ տուին զիտնական անձինք խմբագրական արկղին մէջ դրուած շարս դրութիւններուն, մինն ասաց՝ Ռօստօնի այս ինչ երեւելին անոնց հեղինակը, միւսն ուրիշ գուշակութիւն ըրաւ : Ի՞նչ էր ուրեմն այս յաղթանակի պատճառը : Երդեօք հանձնի՞ : — Եյդ բաւական չէ : Քանի քանի մանկունք են աշխարհիս վըրայ, որք Ռենիամինէն աւելի հոգեկան շընորհք ընդունած են ի վերուստ, բայց և այնպէս արդիւնք մը չեն բերած : — Երդեօք կանոնաւոր կրթութիւն : — Տեսանք, որ վարժարանի դուռը մանուկի համար տաս և վեց հասակին արդէն փակուեցաւ առ միշտ : — Երդեօք ընտանիկան փրկարար ազգեցութիւն : — Տարեբաղդաբար այդ կողմէն նորան բան չէր պակսէր. բայց միթէքիչ օրինակներ կան, որ ամենալաւ ընտանեաց օրհնութիւնն անդամ ունայն կրթնայ զաւակներու համար : — Եթէ Ռենիամինին մէկ բան պակասած լինէր, նա ևս այս անդունդի մէջ կրթնար, ուր որ հազար ու հազար թշուառական մարդիկ անանական կեանք կրվարեն, և այդ մէկ բանն էր որպէս ժողովարչելունեան որինելու առնիւնանդ և բարի կամք :

Երիտասարդ ընթերցող. նայիր Ռենիամինի վրայ և չափիր նորանով կամքիդ ուղղութիւնն ու զօրութիւնը : Աստուծոյ արքայութիւն միայն նա կրվայելէ, ով որ մաքուր և հզօր կամք ունի :

“Կամքս է, որ զմեզ մեծ կրնէ և կամ նուտապ : , ,

(Նուտապինէ):

ԲԱՆԱՍՏԵՐԱԿԱՆ

ՆՈՐԱԴԱՅՆ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ ԳԵՏՆԱԾԱՐԺԻ:

ԱՌԵՋԻՆ ՄԱՅՈՆ

ԳԵՂԱԿԱՆԱՀԱՐԺԻ Նշանակութիւնը :

Ինութեան նշանների մէջ անկարծիք ամենքից ահեղ և փառաւորն է զետնաշարժը : Արտներս գողէ ենում երբ կարդում կամ լսումնք հազարաւոր կենդանի էակների ոչընչանալու և վնասուելու վերայ, որոնց պատճառն է զետնաշարժը, ուրեմն և զարմանալի չէ որ շատ վաղ ժամանակներից մարդիկ աշխատել են հետազոտել և ցոյց տալ զետնաշարժի պատճառն ու ընթացքը : Ինչպէս անցեալ տարուայ Օգոստոսի 13—19 Երևմտեան Ամերիկայում պատահած զետնաշարժի լուրը ոչ միայն ուսումնականների ընդհանուր կարեկցութիւնը շարժեց դէպի վնասուածները, այլ մի և նոյն ժամանակ հարկադրեց բնագետներին զննելու այս անցքի պատճառները : Իրաւ է այդ զննութիւնը շատ դժուար է մանաւանդ որ զետնաշարժը մէջ մասով ոլատահումէ այնպիսի տեղերում, որտեղ չկան ուսումնականներ : Բայց մենք ունինք առ այժմս բաւականաչափ նիւթ ու տեղեկութիւն, որոնցով կարելի է անել հասաւատուն և զրակացութիւններ : 1868 թուի Օգոստոսի սարսափելի զետնաշարժը չվերջացաւ յանկարծ, նորա շօրշօփը դիսպաւ ոչ միայն ԱՄՀ աշխատանին, այլև Նիկոլայ Բիշինան^{*)} մինչև 1869

(*) Հին ունիւթ ասում են Երևանայ Ասէայ և Ադրբէյ երկիրները, իսկ նոր աշխատաքան ասում են

թուի Փետրուար ամիսն անընդհատ ներգործելով այնպէս որ այս վերջին նշանակը հետզետէ միջոց տուին ձիշդ և բազմադիմի դիտողութիւններ անելու, որից դուրս եկաւ այս նոր բացատրութիւնը գետնաշարժի մասին։ Այս բացատրութիւնը առաւել երևելի է արդէն՝ այն պատճառաւ որ դորա զօրութեամբ գուշակուեցան մի քանի գետնաշարժեր ևս 1868 թուի գետնաշարժից յետոյ։ Իսյց չցոյց տուած այս նոր բացատրութեան միտքը՝ վնաս չէ համառոտակի կրկնել դորանից յառաջ եղած հին բացատրութիւնները գետնաշարժի մասին՝ նորա մի քանի տեղեկութեանց հետ միասին։ Այդ հին բացատրութիւնները բաւականաշափ շատ են, թէպէտ նրանցից ոչ մեկն էլ ընդհանրացած չէ զիտութեան մէջ։ Մենք միտք չունիք այդ բացատրութիւնները բանաքննաբար (կրիտիկաբար) հելքելու, այլ առաջ ենք բերում միմիայն ցոյց տալու համար այժմեան զիտութեանց վիճակը այդ խնդրի նկատմամբ։

ԴԵՊՆԱՀԱՐԺԻ ԳԵՍՏԻՆԵՐԸ:

Դեպնաշարժը լինում է երկք տեսակ՝ ա) սողուցիչ շարժ, բ) ալէյն շարժ և գ) շրջադրոյակամ շարժ։ Առջղաձիգ շարժը ներգործում է վարից վեր բօթելով կամ հրընտելով. ալեաւ շարժը ներգործում է ձօձացնելով գետնի երեսը ծովային ալեաց ծփման տեսակ։ շրջապըտոյտ կամ բոլորակաձև շարժը ներգործում է պտոյտներով գետնի երեսը բոլորակի պտոյտքի տեսակ։

Հիւսիսային և Հարաւային Ամերիկայի երկիրները և Լաստրալիայի բազմաթիւ կղղեքը,

Ո-ՂՂԱՅԻՇ շարժ։

Առաջին տեսակ ուղղաձիգ շարժը — "այսինքն" վարից վեր թափ տալը կամրօթոցը — նկատուում է սաստիկ գետնաշարժի ժամանակ։ Կարելի է կասկածել այդ ձեւ շարժի իսկութեան մասին՝ կարծիքով որ դիտողների աչքին միայն այդպէս է երևցել անցքի սաստիկ թիւնից։ բայց այս կասկածը բոլորովին անհիմն է, այն պատճառաւ որ ինչպէս շատ հին, նոյնպէս և շատ նոր տեղեկութեանց մէջ գետնաշարժի մասին՝ յիշուումէ այս տեսակ շարժի վերայ։ Ինչպէս՝ 1783 թուին հարաւային կալաբրէայէ*) և Մեսոլիայի գետնաշարժի միջոցին պարզ և յայտնի երևցել է թէ լնչպէս են վեր վեր թաշում լեռների նուաքար գագաթները — "այսինքն" բարձրացել և ցածացել (վեր կացել ու նըստել)։ Այդ շարժը մինչև անգամ վեր է վերցրել և իջուցել առանց վնասելու շատ մարդիկ և առանձին շինուածքներ։ Ճենց այդպէս էլ յիշուում է, ի թիւս այլոց, ի 1851 թուի Օգոստոսի 14 ին Մելֆիում պատահած գետնաշարժի նըկարագրութեան մէջ թէ՝ առաջին հրնտոցը կամ հարուածը գետնի տակից՝ պատահեցաւ վարից վեր։ Աւրեմն ոչ միայն դիտողութիւններին համեմատ, այլ հենց նոր բացատրութեան մտքին համեմատ կարելի է ասել, որ սողուցիչ հարաւայիները պատահում են գետնաշարժի սկզբում, իսկապէս այն տեղերում որ տեղ նա ներ-

(*) Կալաբրէայ՝ հարաւային Եւրոպայի նահանգ է. իսկ Մեսոլիայ՝ Արևելեան Սիկիլիոյ ծովաքաղաք է որ կտնա հրաբուղիին մօտիկ է. Մելֆին — Խտալիայի մջ է.

գործում է առանձին ուժով և սաստկութեամբ, "այսինքն" որ տեղից որ գետնաշարժը սկսուում է և տարածուում։

Ելեյլ շարժ։

Եմենից շատ յիշուում է Ելեյլ շարժի վերայ, և յիրաւի ամեն գետնաշարժի ժամանակ նկատուում է այդ։ Որովհետեւ ուղայիք հարսուածը համ ցնցուճը վարեց վեր՝ գետնաշարժի կետրունկան առջև է ցոյց տալիս կամ նորա բուն կէտը, ուրեմն ալեճե շարժը ուղղաձիգ հարուածի հորիզոնաձերն թացքն է միայն. զորօրինակ՝ եթէ հանդարտ ջրի երեսն մի քար թափլենք (վերից վար) իսկոյն ջուրը կալեկոծի, զանազանութիւնն այն է որ ջրի միջի ալեյլ շարժը պատահում է ուղայիք հարսուածից վարեց վար իսկ գետնաշարժի ժամանակը մէտայնը պատահում է վարեց վեր։ Ի հարկէ այդ զանազանութիւնը ոչ մի նշանակութիւն չունի հարսուածի առածութեալ վրայ գետնաշարժի ժամանակ, մանաւանդ որ գետնաշարժը պատահում է առհասարակ հողագնութիւնունիւնը *): Բայց որովհետեւ հողի և ջրի առաձգականութիւնը շատ անշան է, վասնորոյ գետնի ճօճը համ ալեյլուճը աւելի զգալի է լինում յայտնի տարածութեան վերայ բուն կէտից բաւականաչափ հեռու կամ մօտիկ, իսկ որքան հեռու գնանք բուն կէտից այնքան ալեճե շարժի ոյժը կթուլանայ և կպակսի և վերջապէս հողը սահմանագծից հեռու կսկսի միմիայն օրօրուիլ կամ դողդողալ։

Ելեյլ շարժի վառուելը։

Ունք արդէն յիշեցինք թէ ալեճե շարժը նկատուել է միշտ ամեն գետնա-

շարժի ժամանակ և թէպէտ այդ շարժը գետնաշարժի միւս տեսակներից պակաս վնասներ է պատճառում, այնու ամենայնիւ դորա հետեւ անքներն էլ շատ սարսափելի են։ Ինչպէս՝ օրինակի համար 1692 թուին Ետայիայ 1) կղզում պատահած մեծ գետնաշարժի նկարագրութիւնը զիտենք թէ ինչպէս բոլոր գետինը ճօճացել և ալեկոծուել է ծովի նման, կարծես՝ հողը ջուր է փոխարկուել, մինչև անգամ մարդիկ՝ որ նորա վրայ կանգնած են եղել, գլորուել են հողային ալեքների գիրկը և նոցա վերայ տարուբերուել, ինչպէս ծովային ալեքը տարուբերում է զանազան փայտերի կտորտանք կամ գերաններ։ 1755 թուին 1. իսսաբոն 2) քաղաքն աւերող գետնաշարժի ականատեսներ պատմում են թէ գետի վրայի նաւակներից պարզ երեւում է ամբողջ քաղաքի տատանիլը և յետ ու յառաջ խաղալը ծովային ալեքների նման։

Վերջապէս միևնոյն նշաններն երեցան 1868 թուին Եմերիկայի գետնաշարժի ժամանակ երբ գետինը առանձին առանձին հարուածներով վարից վեր ցնցուելուց յետոյ նոյնպէս սկսել է շարժիլ և ճօճալ ալեքների նման։

Գետնաշարժի ճանապարհը։

Համարեաբոլոր ականատեսները հաստատում են որ գետնաշարժն ունի մի յայտնի ուղանուն իամ ճանապարհ (3) —

(1) Եամայկայ կղզին Ամերիկայում է։

(2) Լիսասաբոն—Պորտուգալիայի թագաւորութեան մայրաքաղաքն է։

(3) Որովհետեւ ուղղաձիգ շարժը ունի յայտնի ճանապարհ վարից վեր ուղիղ զծի վերայ, վասն-

երբեմն զիտողների համար բաւականին պարզ և զգալի: Խնչպէս 1811 թուին մեծ գետնաշարժի ժամանակ, Մէտունեալով*) հովետում գետնի ալեձեւ շարժը առելի պարզ նկատուել է անտառների մէջ ջարդուող ճիւղերի վնասուցից: Եյս ջերտոցը իւրաքանչիւր հարուածի ժամանակ լսուում էր անտառի մի ծայրից սկսած հետեւաբար մինչեւ միւս ծայրը:

Բայլորակայլ համ ՀՅ Ջապոնիայ շարժ:

Վերջապէս շատ նկարագրութեանց մէջ յիշուում է երրորդ տեսակ գետնաշարժի մասին "այսինքն" բոլորակաձեւ կամ շրջապտոյտ շարժի մասին: Եյդ շարժի ընթացքով բացատրում են մի քանի անցքեր կամ նշաններ: Խնչպէս՝ ծանր մարմինների կամ առարկաների դառնալը առանցքի վրայ (սոնի վրայ). շարժից ամբողջ մնացած շինուածների պատերի տեղափոխութիւնը "այսինքն" եթէ պատի երեսը (մինչեւ գետնաշարժը) մտիկ էր տելիս դէպ ի հարաւ, յանկարծ երեսում է հիւսիսային կողմը ևլն. նոյնպէս դաշտերի և զանազան հողերի սահմանագծի տեղափոխութիւր. ուղղակարդ ծառեր կամ զրօսարանների գծի ծոռւիլը գետնաշարժի ժամանակ ևլն. ևլն: Բայց այս տեսակ անցքերը իցէ թէ պատահում են այն պատճառաւ որ գետնի վերին ծալերը բաւականաչափ մասերում տեղափոխուում են կամ շարժում. կամ կարելի է երկու

որոյ գետնաշարժի ճանապարհ ասելով պիտի իմանակը ալեձեւ շարժի ուղղութիւնը:

(*) Միսսիսիաբի հովետը — Միսսիսիպի գետի երկու կողմն է ընկնում հիւս. Ամերիկայի մէջ:

կամ աւելի գետնաշարժ հողային ալիքներ իրար զիալէնով տեղիք են տալիս շատ բաղադրեալ շարժերի՝ ի թիւս որոց, և պտտեցնում են գետնի վերին մասերը, Միով բանիւ հարկ չկայ մեզ գետնի բուլը լուսակայի լուսունել և ճանաչել ինչպէս հիմնաւոր և հաւաստի զիապուած, թէպէտ մէկ կողմով յայտնի է դորա հաւաստիութիւնը: Թէ այս և թէ այն առաջին երկու ձեւ գետնաշարժը տարածուում է գետնի բոլոր մասերի մէջ, իսկ երրորդը թերեւս միայն նորա մի քանի մասերի կամ ծալերի մէջ:

Գրետինալութիւն պատուին կամ կայի:

Գետնաշարժի առանձին առանձին հարուածների տեսողութիւն առ հասարակ կարճէ շատ հաղիւ նորա հոնքով կամ օրէլուց շարունակուրեւմէ մի քանի բոպէ, երբեմն 20 վայրկենից աւել չէ տեսում, թէպէտ յիշուումէ 10 բոպէ տեսող շարժերի մասին ևս, բայց այդ տեսակ շարժի հարուածները կրկնուում են յայտնի միջոցի մէջ աւելի կամ պակաս արագութեամբ: Խնչպէս օրինակի համար Հարաւային Ամերիկայի գետնաշարժի ժամանակ հարուածները կրկնուում էին Օգոստ. 13—19 շատ շուտ շուտ և կարճ ժամանակամիջոցներով: 1846 թուին գետնաշարժը որ քանդեց ու կործանեց Պերուի մայրաքաղաքը ունէր այնպիսի հարուածներ, որոնք կրկնուում էին իւրաքանչիւր 10° կամ 20 բոպէն անդամ մի, այնպէս որ 24 ժամում մինչեւ 200 սաստիկ հարուած է պատահել: Հունիսը յիշում է թէ 1766 թ. հոկտ. 12ին Կունանա քանդող գետնաշարժի ժամանակ դետինը 14 ամիս ան-

ընդհատ գողում էր ու շարժ գալիս։ Առ-
բուածներն առաջ իւրաքանչիւր ժամ են
պատահել, յետոյ բաւականաշախ երկար
ժամանակամիջոցներով (մարելին), վեր-
ջապէս իւրաքանչիւր ամիսն անգամ մի,
այնուհետեւ բոլորովին դադարել են, բայց
դետինը այնուամենայնիւ շարունակել է
իր ճօճքը։

ԳԵՐԱԿԱՆԱՀԱՐԺԻ ԷԿԱԿԱՆ ՖԱՆՏԱԳՐԱԴԱՅ:

Ամեն բանից սակաւ տեղեկութիւն ու-
նիք գետնաշարժի իսկական ուղղութեան
կամ ձանապարհի վրայ, որովհետեւ այդ
աեսակ դիտողութիւն անելու միջոցներն
ու հնարքը գոհացուցիչ չեն, ոչ էլ յու-
սալի ու հեշտ։ Անընդմիջական դիտողու-
թիւնները հեշտութեամբ կարող են մեզ
սիացնել։ Իմանալ թէ ցնցուած հողի
ալիքը ո՞ր կողմն է զնում կամ ո՞ր տեղից
գալիս այնպէս դժուար է ինչպէս դժուար
է հնչումի ալիքից մակարերել թէ ո՞ր տե-
ղից է գալիս ձայնը։ Մանաւանդ եթէ յի-
շենք թէ հարկաւոր է ո՞ւ ո՞ւ, "այսինքն"
բոլոր ու շաղբութիւննիդ ամփոփել և գործ
գնել այն բոպէին երբ չորս բոլորդ ամեն
բան խաղում է, օրօրուում է, շարժ է
գալիս և վերջապէս քանդուում է, եթէ
յիշենք այս բոլորը, այն ժամանակ հեշ-
տութեամբ կխոստովանիք այդ բանի դըժ-
ուարութիւնը։ Անընդմիջական և կանո-
նաւոր դիտողութիւններից մենք զիտենք
որ շատ ժամանակ գետնաշարժի ալիքը
դիմում է արեւելքից հիւսիսային արե-
մուտք։ 1868 թուի Օգոստ. 13ի գետ-
նաշարժը որ սկսուեցաւ Առէն անունով
Շոլիվայի ծովաքաղաքից տարածուեցաւ
ովհել ձանապարհաւ արեւելքից արե-

մուտքը։ Պալերմայի 27 գետնաշարժից 19ը
արեւելքից արեւմուտք է եղել, Կհարաւից
հիւսիս, իսկ Կը հարաւային արեւմուտքից
հիւսիսային արեւմուտք։ Ուրեմն հողային
ալիք (որն այդպէս անուանում ենք հո-
ղագնախի խորքերում հողուած նիւթե-
ղէններից բազկացած ալիքից ջոկելու հա-
մար—որը կոչուում է լառտէն (լաւայի)
ալիք միշտ վերոյիշեալ ընթացքով չէ
շարժում այլ ուրիշ ընթացքով ևս։ Դի-
տողութիւններից հաստատ զիտենք նաև
որ հողային ալիքը երրեմն իր ճամբէն փո-
խում է ուրիշ արգելքներին դէմ առնե-
լով։ Այդ արգելքներն են լեռներն ու
բլուրները դիմաւորապէս, բայց յայտնի
բան է որ լեռների և բլուրների լառն ո-
սուզունիւնը միայն կարող են ներգործել
հողային ալիքի ձանապարհի վրայ։ Լեռ-
ների կազմուածքը և նոցա բազկացու-
թիւնը այդ դէպքում չունին ոչ մի նշա-
նակութիւն, բայց հաւատալի է որ այդ
լեռների դատարկ քարանձաւներն ու այ-
րերն ինչպէս առաձգական զիմաղբողները
ամենից ուժով ներգործեն հողային ալիքի
ձանապարհի և յետ գառնալու վրայ։

ԳԵՐԱԿԱՆԱՀԱՐԺԻ ԴԻՄՈՒՄ ԹԵՂԵՐԸ:

Գետնաշարժը աւելի շուտ շուտ պա-
տահում է այրեցած գօտուոյ տակ, բայց
ոչ յատկապէս այն տեղ։ Ծնդհակառակը
բաւականին շուտ շուտ է պատահում և
բարեխառն գօտուոյ տակ և երբեմն անգամ
ցուրտ գօտուոյ տակ։ Գետնաշարժը նմա-
նապէս կախում չունի գետնի ձևից ու
կազմուածքից։ Նորա տարածուելուն բնաւ
չեն կարող արգելք լինիլ ոչ լեռները, ոչ
ձորերը, կամ խորունկ գետերը և ոչ էլ

ընտեղ ու ովկիանոսները, թէպէտ լեռները
ինչպէս վերն յիշեցինք կարող են բաւա-
կանաչափ փոփոխել հողային ալիքի ըն-
թացքը: Ուստիկ գետնաշարժերը սովո-
րաբար տարածուում են շատ հեռու ըն-
դարձակութեան վերայ: Ինչպէս 1775
թուի Կոյեմբ. 1ին Լիսաբոնը քանդող
գետնաշարժը Գրէօնլանդիայից և Խոլան-
դիայից անցաւ Կորվէկիոյ, Շվեյցիոյ, Գրե-
մանիոյ, Օվեցերիոյ, Գրալլիոյ, Խոպանիոյ,
Մարօկկոյի, Ֆէցի վրայ և այն տեղեց դէ-
պի արևմուտք մինչև Ենտիլիոյ կղզեքը և
Օնտարիօ լիճը: Եթէ 1868 թուի Օգոս-
տանու գետնաշարժի սահմանը աչքի ա-
ռած՝ հաշուենք միենոյն ժամանակ բոլոր
նրանից յետոյ պատահած շարժերը մինչև
1869 թուի Յունուարի վերջը. այն ժա-
մանակ կիմանանք որ յիշեալ գետնաշար-
ժը համարեա ողջ հողագունտն էր պա-
տել: Առհասարակ գետնաշարժը պատա-
հում է բաւականին շուտ շուտ միայն ո-
րոշուած ժամանակ և կանոն չունի, այն-
պէս որ երբեմն ամբողջ տարիներ են անց-
նում երկու գետնաշարժի մէջ տեղ, եր-
բեմն էլ պատահում է մէկը միւսի ետեւն
յանկարծ: Այս կողմից աւելի յայտնի են
1778, 1821, 1822 և վերջապէս 1868
թուականները: Վերջապէս գետնաշարժի
նախկին բոլոր տեղեկութիւններից հար-
կաւոր է զիտնալ, որ հին ժամանակնե-
րում գետնաշարժը անհամեմատելի կեր-
պով շուտ շուտ և սաստկութեամբ է պա-
տահել մինչև անդամ այն տեղերում,
որ տեղ հիմայ պատահումէ շատ հա-
զիւ:

Առաջաբաշխական անցելը ներգրածութեանը
գետնաշարժէ վերայ:

Թէկ գետնաշարժը առհասարակ պա-
տահական է և անկանոն, այնուամենայ-
նիւ հնար է եղելնկատել թէ ի՞նչ յարա-
բերութիւն կամ շաղկապ ունի նա միւս
աստղաբաշխական անցքերի հետ: Ինչպէս Գրաղղիացի աստղաբաշխ Ներքէնը ման-
րազննին հետազոտութիւններ անելուց
յետոյ գոտու՝ որ հինգ հաղար գետնա-
շարժից՝ որոնց հանգամանքը հաստատա-
պէս յայտնի է եղել կամ կարելի է եղել
լրացնել զանազան հաշիւներով, ամենից
լայ և ամենից սաստիկ գետնաշարժը պա-
տահել է նոր լսունի և միջալսունի ժամա-
նակ: «Ամանապէս նա գտել է, որ գետնա-
շարժը ամենից լայ է պատահում հողագնոյի
լուսնին ամենամօտիկ լինելու ժամանակ և
շատ սակաւ է պատահում այս երկու մո-
լորակների իրարուց շատ մեծ հեռաւորու-
թիւն ունենալու ժամանակ: Լուսնի ա-
մենաբարձր կէտի վերայ գտնուելն անգամ
մի յայտնի կապ ունի գետնաշարժի սկզբ-
նաւորութեան հետ: Որովհետեւ լուսնի
վերոյիշեալ բոլոր դրութիւններից հողա-
գնատի վերաբերութեամբ՝ կարող է պա-
տահել արեկի խաւարումն (բռնուիլը),
վասնորոյ հարկաւոր է կարծել՝ որ գետ-
նաշարժն և արեկի խաւարելը շատ ժամա-
նակ պատահում են մէկ տեղ (մէկ միջո-
ցում): Եւ յիրաւի քննութիւնները
ցոյց են տալիս, որ 18ն գետնաշարժից
13ը պատահել են արեկի խաւարման հետ
միասին թէպէտ և ոչ միենոյն օրում:
Ինչպէս օրինակի համար 1868 թուի
գետնաշարժը շարունակուաւ Օգոստ. 13
— 19ը և յայտնի է որ նոյն ամսու 18ին

պատահեցաւ արեի ամենամեծ խաւարութիւնից մէկը:

Արդարութիւն անցէց գեղարշարժի ժամանակ:

Գետնաշարժին վերաբերելի զիտողութիւններն տալուց պէս ցոյց զլխաւոր յետոյ հարկաւոր է յիշել մի քանի ուրիշ հանգամանքներ ևս, որոնք երեսում են այս ահալի անցքի հետ միասին: Դորանցից աւելի հետաքրքրականն է ովկիանոսի կամ ծովի ահազին ալիքներու ծփախն ու տատանելը ափերի մօտ: Գրեթէ գետնաշարժի բոլոր տեղեկութեանց մէջ յիշուում է թէ ինչպէս ծովը սկզբում յետ է զնում "այսինքն" ափերից փախչում է և յետոյ զարգանդեցնող ալիքներով յարձակուում է ափի վերայ անցնում է սորա վերայից դեպ ի ցամաքը և ցամաքի վերայ ջարդուփշուր անելով իր ծանր և ահազին ալիքը, յայտնի բան է զարհութեցնում և կրկնարարդում է գետնաշարժից պատճառած վիասն ու աւերանքը: 1868 թուի գետնաշարժի նկարագրութեանց մէջ ևս շատ տեղ յիշուում է այսպիսի սարսափելի տեսարանների վերայ: Ըատերը Պերուի Կիվիկվայ քաղաքից հաղորդած լուրերից գուցէ կմտարերեն և դիտեն իսկապէս, որ մեծ շոգենաւերը իրանց տորմիղներից հանուելով նաւահանգստից մինչ ցամաք մէկ են ձգուել ծովափից հարիւր սաժենաչափ (մի սաժենն է եօթն ոտք կամ 12 ելք—և կամ երեք հալապի) և այդ ժամանակ նրանցից մի քանիսը կտոր կտոր են եղել, մի քանիսն էլ բոլորովին ամբողջ մնացել, իսկ շատ շինուածքներ բոլորովին աւերուել և ջընջուել են գետնի երեսից:

Գետանի ճեղ+ելլ:

* Ամանապէս շատերին յայտնի է թէ ինչպէս սաստիկ զլբզոցից և ճօճալուց շատ տեղ բացուած են զետնի երեսին ճեղքեր: Ինչպէս օրինակի համար Ճումբոլդը յիշում է իր աեղազբութեան (Ասմոսի) մէջ թէ Ծիօրամբի *) գետնաշարժի ժամանակ գետինը միշտ ճեղքուում էր բանալով լոյն կամ նեղ և խորունկ ձորեր ու խորխորատներ: Մի քանիսը կարողացել են ազատուիլ այդպիսի գեպքում՝ մեկնելով իրանց ձեռքերը հորիզոնական ձեռով (գետնի հետ զուգահեռաբար) և կախ են ընկել նեղ յատակի երկու եղերքից մինչեւ օդնութիւն ստանալներն: Ըատեղ ամբողջ կարաւաններ թէ ձիաւորներ և թէ բեռնաւորներ յանկարծ անհետացել են գետնի տակ, ընդհակառակը ոմանք իսկոյն նկատելով գետնի ճեղքուիլ կարողացել են ազատել իրանց գլուխը: Եհազին ամբողջ տներ և շինուածքներ թափուել են նոցա մէջ բոլոր իրանց բնակիչներով, որոնք ոչ միայն անվնաս են մընացել, այլ անգամ կարողացել են արձակ համարձակ մէկ սենեակից միւս սենեակը անցնել և մի քանի օր ապրել՝ տան մէջ պատահմամբ մնացած պաշարեղէնով մինչեւ որ այդ խոր վլատակները փորելով դուրս են հանել նրանց: Ըատ երեւելի օրինակ է ճեղքերի բացուելու և խփուելու արագութեան նկատմամբ՝ 1851 թուի

(*) Հարաւային Ամերիկայի Եկուատօր անուն երկրի մէջ Զենքօրասսօ լիրան հարաւային ստորատն է գտնուում:

գետնաշարժը որ սպասահելէ Բառովիստը քաղաքի մէջ՝ Նիստոլիսյի նահանգում։ Մելքիսին մօտ Բարելում՝ զանուելէ մէկ հաւ որի ուները պինդ սղմելէր իրար՝ սպատառուած հողը։ 1868 թուի գետնաշարժի միջոցին ևս յիշուումէ գետնի զանազան ձեղքերի և պատառուածների մասին։ Արեկիսից հաղորդում են որ այն տեղ բացուած ձեղքերից բղիել է տլոտ ջուր։ Արեկում մէկ շատ նեղ ձեղքից (երեք մատնաչափ լայնութեամբ) դուրս էր փչում թանձր գարշահոտ փոշի։ Մեկսիլոն քաղաքում որ բոլորովին աւերուել է և անշետացել գետնի երեսից, մէկ տանից զատ, բացուել է մէկ մէջ լուսաբար 12 սաժէն (84 ոտնաչափ) լայնութեամբ, որն և իսկայն լցուել է տլոտ ջրով։ Ուրիշ տեղեր քիչ թէ շատ տլոտ ջրի հետ ձեղքերից դուրս է տուել թանձր զոլորշեք(շողի) ևս։

ԳԵԵՊԻՆԻ ԱՌԱՋԱԿԱՆԵՐ:

Գետնաշարժից յետոյ գետնի երեսին երեցած ուռոյցները կամ փոսերը լինում են երբեմն աննշան և երբեմն էլ շատ մեծ ու երկարատեւ։ Օռովերի կամ ովկիանոսների յատակից դուրս են գալիս ամբողջ կղզեներ կամ զանազան վտանգաւոր տեղեր սովորական նաւազնաց մասերում։ Խնդում 1868 թուի գետնաշարժի ժամանակ խաղաղ ովկիանոսի (Մեծ Ավկ.) երեսին երեցան մի քանի կղզեներ, Ամերիկա յի ցամաքի վերայ շատ տեղ գետինը բաւականին բարձրացել է, իսկ այն տեղում, որտեղ Կոտոկախի քաղաքն էր հիմայ բացուել է խոր լիճ։

ԳԵԵՊԻՆԱՇԱՐԺԻ ՅԱյՆԸ :

Գետնաշարժի հետ շատ ժամանակ լրուումէ գետնի տակից ձայն կամ գոռոց դղրդոց, սաստիկ ամսի գոռոցի նման, բայց այդ ամեն ժամանակ չէ պատահում։ 1868 թուի գետնաշարժի ժամանակ ասումէին որ Լէճայ քաղաքում Օգոստ. 13—15ը եղել է տասն հարուած, բայց չէ մի ձայն կամ գոռոց ու դղրդոց չէ լսուել։ Արեկիսից մէջ գետնաշարժը սկսուել է Օգոստ. 13ին ստորերկրեայ որոտման և վերջացել է սաստիկ գոռոցով։ «Այն քաղաքում (հարաւային Ամերիկայի արևմուտքում) սարսափելի անցքի նշաններ եղել են ստորերկրեայ ձայն մի մըրկի ձայնի նման, իսկ Բայեօդոնզոյի մէջ լսուել է սաստիկ որոտմ մի գետնի տակից, բայց հողը չէ խաղացել և յատկապէս գետնաշարժ էլ չէ պատահել։ Երբեմն գետնաշարժի միջոցին ծովի մի քանի տեղերում ջուրը կծփայ սովորութիւնից դուրս որպէս թէկեփի, յայտնի բան է որ այդ սպատահումէ ծովային յատակում ձեղքերից, որոնք ստորերկրեայ շողիի կամ կազի և կամ բոցի համար աղատ ճանապարհի տեղ են բոնում գետնաշարժի միջոցին։ Գետնի ծօճքը շարժի ժամանակ սովորաբար սաստիկ է, լինում և ինչպէս մենք վերն յիշեցինք մարդիկ ոչ թէ չեն կարող ոտքի վերայ մնալ, այլ ինչքան էլ որ դէմ են կանգնում կամ ուրիշ հնարքներ գործածում, դարձեալ զոր զոր են դալիս գետնի երեսին։ Ի հարկ է այդպէս սաստիկ է գետնաշարժը բուն կէտին մօտիկ իսկ բուն տեղից հեռու տարածութեան վերայ հարուածները աւելի թոյլ են լինում և երբեմն էլ անհշարիլի։

ԳԵՂԱԿԱՆԱՀԱՐԺԻ ՊԱՊԻՆԱԿԱՆ ԱՌԵՐԱՆՔ

Գետնաշամի զանազան վլասների և աւերանքի վերայ յիշելն զրեթէ աւելորդ է։ Յայտնի է որ նրա երեսից շատ ծաղկեալ քաղաքներ, մինչև անդամ ամբողջ գաւառներ անհետացել են կամ ամայի դարձել։ Հաղարաւոր մարդիկ ոչընչացել են կամ արատաւորուել, շատերը անյայտացել են բոլորովին առանց հետքի։ Ինչպէս օրինակի համար 1868 թուի գետնաշամի ժամանակ, պաշտօնական տեղեկութիւնների զօրութեամբ զիտենք որ մի օրում այն է Օգոստ. 13ին ոչընչացել են 54 հաղար մարդ։ շատ քաղաքներ մինչև հիմայ գտնուում են ամայի անշեն վիճակի մեջ։ զոյքի կորուսար անշուշտ միլիոնների արժողութեան է հանում։

Եւսազն կարծիք ու գեղականահարժի մասին։

Ինչպէս վերին յիշեցինք մարդիկ շատ հին ժամանակներից հետաքրքիր էին իմանալ այս սարսափելի և աչեղ գետնաշամի խսկական գաղտնիքը։ Յառաջ կարծում էին թէ գետնաշամի պատահումէ այն պատճառաւ։ որ գետնի երեսի ջրերը իրր թէ մի քանի տեղերից ծծուելով անցնում են գետնի տակ մինչև նորա հաղածամենաջերմ մասերը և այն աեղ փոխարկուելով գոլորշեք կամ կազ, ձնշումն վարից վեր հողագնտի կեղեք։ Բայց այս բացատրութիւնը շատ թոյլ է՝ առաջինն այն պատճառաւ որ գետնի տակի գոլորշեքի կամ շողիի համար կան դուրս գալու շատ արձակ ճանապարհներ (ինչպէս են օրինակ հրարաւզինների բերանները), վասն

որոյ նորա չեն կարող հասնել այն առաջ դահան ոյժին, որն երեսում է գետնաշամի ժամանակ։ Երկրորդ այն պատճառաւ՝ որ շողին (գոլորշեքը) կամ կազը պիտի ունենայ չսովազանց աւելի առաջականութիւն, բայց այդ բոլորովին անկարելի է առ հասարակ շողին կամ կազի համար։ Մեզ այժմն յայտնի է որ շողիի ոյժը անշուշտ ունի իրա համար սահման և յայտնի միջոցներում նորա առաջ դահան նիշունը՝ +անի շատ նաև յըտակայ շնչին այնուան պահանում է, որովհետեւ շնչին հասելը՝ +անի շատ նաև յըտակայ շնչունի նայա կոխադաբան յնչունի նոր կամ պարագանը։ Ա երջապէս թէ որ գետնաշամի պատճառը լիներ սոորերի կրեայ շողին, ուրիմն գետնաշամի միջցին պետք է ձեղքերից կամ հրարուղիների բերանից այնչափ գոլորշեք դուրս տար որ նրանով ծածկուեր համարեալ ողջ հաղպունար։

Եւ ինչոր կարծիք է կամ Բառառնի օյի կարծիք ու գեղականահարժի վըրայ։

Գետնաշամի բոլորովին ուրիշ կերպ է բացատրում Բառառնին։ «Նորա կարծիքով գետնաշամի պատահումէ այն պատճառաւ։ որ գետինը միշտ բարձրանում և ցածանումէ հանգարտ ու կամաց կամաց։ Եյս տեսակ մշտական շարժումից զետեսակը բացուում են անջրակետներ և մեծամեծ այրեր, նորա զանազան ծալերի միջի փոխագարձ շաղկապը կորչումէ կամ խանգարուում և այդ պատճառաւ ժայռեր և ցամաքի մի քանի մասերը իրանց ծանրութիւնից սախպուած փլշումն և շարժում կամ ծօճացնում են ահազին տարածութիւններ։

Վ ԵՐՋԻՆ ՀԻՄՆԵԼԻ ԳԵՐԵՆԱՍՏՐԻ ԽԵՐԱՅ:

Վ ԵՐՋԱՊէս գետնաշարժի գաղտնիքը
մեկնում են և այսպէս՝ ջուրը թափանձե-
լով գետնի խորքերը, ողողում ու մաք-
րում է շուտով հալող քարերի կամ հո-
ղերի մասերը — որից յետոյ գետնի տակ
բացուռում են աշազին անջրպետներ կամ
քարայրեր։ Գետնի մի հասը գտնուելով
սյդ անջրպետի կամ դատարկ քարայրի
վերել անպատճառ կիզչ իր ծանրութեան
պատճառաւ, որից անշուշտ կհետեւի շարժ
կամ ճօճ։ Խսկ անջրպետների միջի օղը
թէ իր Ճնշուելու երեսից և թէ իր տեղա-
փոխութեան երեսից խաղալով գետնի տա-
կին հաղորդում է նրան ալեյւ շարժ։ Եյս
բացատրութիւնները կամ կարծիքները
քննելու համար դէմ առնել չենք կամե-
նում. միայն այսքանս հարկաւոր է ասել
բացատրութեանց միջից դալիս է Վ ԵՐ-
ՋԱԿԱՆԻ և ՊԼՈ-ԴՆԵՍՏ բացատրութիւն-
ների հոտը, բայց դրանցից ոչ մէկն էլ կա
նոնաւոր և Ճիշտ փաստեր չունեն։ Կար-
ծիք չկայ որ հողային մասերի ողողումից
կամ նոցա մէկ մասի բարձրանալուց, խսկ
միւսի ցածանալուց միայն զանազան փլա-
տակներ կամ հողային ուռոյցներ կարող
են երենալ, այլ ոչ ամբողջ գետնաշարժ։

(ԱՌԱՋԵԿԱՆ և ՅԵՐԵՆՔԱՅԱ)։

Բ Ա Ր Ա Յ Ա Կ Ա Ն

ՏԵՐԵԲԵՐԴ ՀԱՅ ՄԱՆՈՒԿԻ

ԱՅՆՈՅԻ, ծարաւ, զլուիլ քաշ գծած
Եւր ճնողներից վաղուց որբացած

Հօր տանից, տեղից արդէն հեռացած
Երջում էր մանուկը մաքով մոլորուած։

Կնչպէս անզգայ սիրո պէտք է լինէր,
Որ այս թշուատին տեսնէր չցաւէր։
Բոկոտն, զլուխը բաց, շորերը պատղուտած
Աղի արցունքով աչքերը լցուած։

Եւր հայրենիքից, ծնողներից զրկուած
Օտար աշխարհում գերի մատնըուած,
Անզում մարդերից հալածուած տանջուած —
Խեղճ մանկանն այս էր ճակատին զրուած։

Ըստ տեղ ման եկաւ. շատերին խնդրեց
Եւր սրտի ցաւերն շատերին պատմեց.
Բայց նորա խնդիրն ի զուր անցկացաւ.
Ցրտի զգացմունքըն ոչ ոք չ'իմացաւ։

Տարաբաղդ մանուկն զարձեալ հեռացաւ
Գնաց մի սիրուն զաշտի մէջ մտաւ.
Մի գաշտ, ուր բնութեան գեղեցիկ ձիրքերն
Կը շըլացնէին մարդկային աչքերն։

Այստեղ, քիչ հեռու մի քար նրկատեց
Գնաց յուսահատ և վրէն նստեց,
Գլուխը քաշ զձեց սիրուլ լըքցլուեց
Հին յիշատակներն նորից միտ բերեց։

Երգեցիկ թռչնոց քաղցր ձայները,
Գյղնղղղն ծաղկանց անոց հոտերը —
Եյս էր, — եթէ ոչ խորին լուսթիւն
Տիրում էր այս մէծ դաշտումը անհուն։

Մարէ չ'կար այնտեղ. միայն թէ մի կին
Հեռուից տեսաւ քամբաղդ մանուկին.
Մօտեցաւ տեսաւ յուսահատ նստած,
Գութը շարժեցաւ, — մէղմ ձայնով ասաց։

,, Ի՞զնի՛ւ զու մանուկ, ինչո՞ւ ես տիսուր
,, Անչո՞ւ ես այդպէս մտածում խիստ սուր
,, Ո՞ր տեղից ես զու, ի՞նչ է քո անուն,
,, Ունի՞ս քեզ հայր, մար, կամ սեփական տուն։

,, Աչքը բաց արա, նազի՛ր այս դաշտին,
,, Աներ կաց զուարթանի՛, լիի իմ խօսքին
,, Ես քեզ կը սիրեմ ինչպէս իմ հոգի,
,, Քեզ կը պահպանեմ ինչպէս իմ որդի։
,, Ո՞վ բարի Տիկին, ասաց քամբաղդը,
,, Քո միիթարանի՛, քո ուեր, զրուանկը,
,, Բաւական չ'է իմ վշտերս ամպել,
,, Ես շատ եմ զրկուել, ոչինչ կեանք տեսուր։